

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Ծնվել է 1946 թ., Էջմիածին քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է նույն քաղաքի № 1 միջնակարգ դպրոցում, որի 7-րդ դասարանն ավարտելուց հետո, 1960 թ., ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1966 թ. հաջողությամբ ավարտելով ճեմարանի դասընթացը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նույն թվականին մեկնել է Զագորսկ՝ տեղի հոգևոր ակադեմիայում խորացնելու ռուսերեն լեզվի իր գիտելիքները և ծանոթանալու Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պատմությանը:

1967 թ. ներկայացրել է իր ավարտաճառը հոգևոր ճեմարանի տեսչությանը, այն հաջողությամբ պաշտպանել և ստացել հոգևոր ճեմարանի ավարտական դիպլոմ:

1967—1968 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1969 թ., որպես սարկավագ, ծառայել է Օրջոնիկիձե քաղաքի հայոց եկեղեցում և նույն տարվա հոկտեմբերին Մայր Աթոռում ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի:

1969—1971 թթ. վարել է Ռոստովի հայոց հոգևոր հովվի պաշտոնը:

1971 թ. դեկտեմբերին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մեկնել է Ֆրանսիա և պաշտոնի կոչվել Լիոնի հայոց եկեղեցում՝ միաժամանակ հետևելով ֆրանսերեն լեզվի դասընթացների՝ որպես ազատ ունկնդիր: Ապա 1975 թ. մինչև 1979 թ. փետրվար ամիսը պաշտոնավարել է Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում:

Վերադառնալով Մայր Աթոռ՝ 1979—1980 ուսումնական տարեշրջանում վարել է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը:

1981 թ. մայիսին նշանակվել է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակի օգնական, իսկ 1982 թ. նոյեմբերին ընտրվել թեմական առաջնորդ ու հաստատվել Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից 1983 թ. մարտին:

1983 թ. հոկտեմբերի 23-ին Մայր տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ որպես Արգենտինայի թեմի առաջնորդ: